

ցուցանէր. եւ ժամ մի դատարկ ոչ լինէր. զցայգ եւ զցերեկ հսկէր եւ տքնէր յաղօթս անձանձիր ոտնակացութեամբ. եւ պարապէր միշտ ընթերցմամբ սուրբ Գրոց» :

Ունէր Մովսէս իրեն ընկերակից Ազարիա Սասնեցին, որ յարած էր 1609ին Գրիգոր Կեսարացւոյն՝ աշակերտելու անոր⁶ :

Ամթեցւոց տուած խոստումը՝ 1609ին ամառը այցելել Սրապիոնի գերեզմանին՝ չէր կրցած ի գլուխ հանել Գրիգոր Կեսարացի, որովհետեւ հակառակ իր կամքին ընտրուած էր պատրիարք: Բայց 1610ին, գարնան ստիպուեցաւ թողուլ աթոռը Յովհաննէս Խուլին⁷ եւ հեռանալ Կ. Պոլսէն :

Համարելով այժմ ժամանակը յարմար, հորհեցաւ Կեսարացին դառնալ իւր վաղեմի ծրագրին եւ այցելել Ամիդ : Կար հրապարակի վրայ նաեւ Երուսաղէմի պարտքի խնդիրը, որուն ինքը պիտի տանէր դարման : Այս պատճառաւ ալ, ինչպէս կը պատմէ Յակոբ Կեսարացի⁸, «ի ՌԾԸ (1609) թուին⁹ նաւեալ ի Բիւզանդիոյ յԵգիպտոս, ելեալ ի լեառն Սինա, ընդ իւր ունելով զՄովսէս վարդապետն, տուեալ նմա գաւազան¹⁰, որ

⁶ Համամճեան, Յուցակ հայ. Զեռագրաց Գաղատիոյ, Թ. 11.

⁷ Հմմտ. Հ. Գ. Գալէմքեարեան, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու. Վիեննա 1915, էջ 2:

⁸ Զեռ. Վիեննայի Թ. 593:

⁹ Պէտք է իմանալ 1610:

¹⁰ Գաւազանի տուչութիւնը տեղի ունեցաւ 1612ին. տե՛ս վարը: